

Կարծիք

Թամարա Զավենի Գրիգորյանի «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասությունների հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

28-ը դեկտեմբերի 2020 թ.

Թամարա Զավենի Գրիգորյանի «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասությունների հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է վարչարարության կարևորագույն ոլորտներից մեկի՝ հարկային մարմինների և հարկատուների փոխհարաբերությանը, այդ համատեքստում վերջիններիս կարգավիճակին առնչվող այնպիսի հարցադրումների, որոնց վերաբերյալ գիտական հետազոտությունը ի զորու կլինի նպաստելու Երկրի տնտեսական հիմքերի համար չափազանց կարևոր հարկային քաղաքականության բարելավմանը: Ընդ որում, հեղինակին հաջողվել է հետազոտության համար ընտրել թեմային առնչվող առավել արդիական հարցադրումները:

Ատենախոսությունում համարժեք ներկայացված են թեմայի և թեմային անմիջականորեն առնչվող առանձին հարցադրումների արդիականության վերաբերյալ բավարար չափով հիմնավորված փաստարկներ: Մասնավորապես, հեղինակն ընդգծել է. «... միջազգային և ազգային հանրային շահերի փոփոխումը պահանջում են արմատական բարեփոխումներ հարկային համակարգում և հարկային մարմինների գործառույթներում, հարկային ծառայողի (ծառայության) և հարկ վճարողի հարկաիրավական հարաբերություններում, հարկ վճարող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, հարկային գործակալների, ինչպես նաև հարկային հարաբերությունների մյուս մասնակիցների իրավական կարգավիճակի

կանոնակարգման ոլորտներում: Հետևաբար, անհրաժեշտ է հիշյալ գործընթացներն ուղղել հանրության շրջանում հարկային իրավունքի սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, հարկ վճարողների հետ հարաբերությունների ոլորտում հարկային ծառայողի դերի դրական ընկալման փոփոխությանը»:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, դրանում պահպանված են շարահյուսական և քերականական կանոնները, որպես կանոն, բացակայում են խրթին մտքերը, բացի այդ, հիմնականում, պահպանված են ատենախոսության ձևավորմանը ներկայացվող պահանջները, իսկ այդ կապակցությամբ առանձին, ոչ էական նկատառումներին անդրադարձ է արված ստորև:

Հետազոտության արժանիքներից է նաև ակնհայտ համարժեք գիտագործնական նյութի առկայությունը, ընդ որում, հեղինակը ոչ միայն փորձել է իր փաստարկները հիմնավորել կոնկրետ նորմատիվ փաստաթղթերով, միջազգային փորձի արդյունքներով և տեսական աղբյուրներով (այդ թվում՝ արտասահմանյան հեղինակների մենագրություններում արտացոլված մոտեցումներով), բացահայտել է դրանց ուղղվածությունն ու կիրառման գործնական հիմնախնդիրները, այլև կատարել հետազոտության առանձնահատկություններից բխող և արդիական նշանակություն ունեցող պատմահրավական և համեմատական-իրավական ուսումնասիրություններ:

Հեղինակը դրսևորել է ընտրված թեմայի և դրան առնչվող առավել արդիական հիմնահարցերի առնչությամբ դատողություններ անելիս, դրսևորել անհրաժեշտ ինքնատիպություն, տեսական աղբյուրներից, օրենսդրական ակտերից և միջազգային իրավական փաստաթղթերից գիտական ակնկալվող խորությամբ օգտվելու և անհրաժեշտ վերլուծություններ կատարելու հմտություններ:

Մեր կարծիքով հիմնավորված և ուշադրության արժանի են ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացված դրույթների մեծ մասը: Մասնավորապես, գիտական չափանիշներով ընդունելի է ատենախոսի կողմից առաջարկվող «հարկային վարչարարություն» եզրույթի բնորոշումը, որն իր մեջ ներառում է գիտագործնական

հատկանիշների ինքնատիպ ամփոփում, և ըստ որի. «Հարկային վարչարարությունը լիազոր մարմնի կողմից իրագործվող պետական կառավարման գործառույթ է, որն ուղղված է առաջնահերթության սկզբունքով պատշաճ վարչարարության հենքով հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառման ապահովմանը, ինչպես նաև հարկային ոլորտում արդյունավետ քաղաքականության իրականացմանը»:

Գիտական արժեք ունի նաև ատենախոսի այն դիրքորոշումը, ըստ որի՝ հարկային իրավական հարաբերություններում, ի տարբերություն՝ այլ բնագավառների իրավական հարաբերությունների, իրավասուբյեկտությունը լիարժեք կարող է համարվել, իսկ սուբյեկտն էլ պատասխանատվության ենթարկվել միայն այն դեպքում, երբ հարկատուի իրավունքի սուբյեկտը նախապես պատշաճ կարգով ծանուցված է եղել իր կարգավիճակի մասին:

Հեղինակի կողմից մշակվել են նաև օրենսդրությունը բարելավելու վերաբերյալ մի շարք գիտագործնական արժեք ունեցող առաջարկություններ, որոնք կարող են պիտանի լինել հարկային քաղաքականության ոլորտում վարչարարության իրավական հիմքերը կատարելագործելու տեսանկյունից:

Ատենախոսության ձևավորումը, կառուցվածքը և ծավալը, հիմնականում, համապատասխանում են սահմանված պահանջներին:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Հետազոտության թեման թելադրում է, որ, ըստ էության, անհրաժեշտ խորությամբ ոչ միայն պետք է ուսումնասիրվեին հայրենական և ռուսալեզու տեսական աղբյուրներ, այլև այնպիսի օտարալեզու հետազոտություններ, որոնք վերաբերում են հարկային մարմինների իրավասուբյեկտությանը: Իհարկե, հայրենական հարկային համակարգն առավելապես համահունչ է Ռուսաստանի Դաշնության և ԵԱՏՄ-ի մյուս անդամ պետությունների հարկային համակարգի հետ, այնուամենայնիվ,

ուսումնասիրության շրջանակներն ավելի ընդգրկուն ու սպառիչ կլինեին, եթե որոշակի խորությամբ ուսումնասիրվեր նաև արտասահմանյան այլ երկրների համանման փորձը:

2. Սկզբունքորեն ողջունելի է իրավունքի և օրենքի անալոգիայի առնչությամբ հեղինակի դիրքորոշումը, սակայն այդ հարցի առնչությամբ հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե հեղինակն անդրադառնար իրավունքի և անալոգիայի կիրառման շրջանակներին կոնկրետ հարկային վարչարարության համատեքստում, փորձեր վերլուծել այդ ուղղությամբ իրավակիրառ պրակտիկան և բացահայտեր օրենքի, առավել ևս իրավունքի անալոգիայի կիրառման անհարկի նեղ շրջանակների պատճառները: Ընդունելի են իրավունքի և օրենքի անալոգիայի կիրառման չափանիշների առնչությամբ հեղինակի դատողությունները, սակայն հետազոտության համալիրությունն ապահովելու նկատառումով այն, թերևս, բավարար չէ:

Խնդիրն այն է, որ այդ ոլորտում ևս իրավաստեղծ գործունեությունն, ինչպես և հեղինակն է նկատել, մեծամասամբ բնութագրվում է, որպես ռեգրեսիվ գործընթաց, քանի որ օրենքի յուրաքանչյուր բացի պարագայում, այն լրացնելու, թերևս, եզակի միջոց է ընկալվում համապատասխան իրավական ակտ ընդունելը, մինչդեռ՝ խոսքը հաճախ այնպիսի հարաբերությունների մասին է, որոնք անարգել կարող են կարգավորվել օրենքի կամ իրավունքի անալոգիայի միջոցով: Անհարկի նորանոր նորմատիվ իրավական ակտեր ընդունելը մի կողմից ուժացնում է իրավական համակարգը՝ բարդացնելով բուն իրավակիրառ գործընթացը, մյուս կողմից՝ նվազեցնում է նորմատիվ իրավական ակտերի հետ աշխատելու մասնագիտական հմտությունների ձևավորման հնարավորությունը:

3. Թեզում այն մոտեցումն է առաջադրված, ըստ որի. «... հարկային հարաբերություններում չի գործում «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» սկզբունքը»: Կարծում ենք, հիմնավորված կարելի է համարել նաև այս առնչությամբ հեղինակի մոտեցումները: Մյուս կողմից, հարկ էր նկատել, որ այս սկզբունքը համընդհանուր է, և որոշ առանձնահատկություններով կիրառելի է նաև հանրային պատասխանատվության ցանկացած ոլորտում, այդ թվում՝

քրեական պատասխանատվության դեպքում: Պարզապես, հարկ է մի կարևոր վերապահում անել, որ խոսքը ոչ թե օրենքի չիմացության, այլ արարքի հակահրավակական լինելու վերաբերյալ բավարար իրազեկվածության մասին է:

Համամիտ ենք հեղինակի այն դիրքորոշման հետ, որ հարկային օրենսդրությունն ինքնին բարդ է, մեծածավալ և հաճախակի փոփոխվող, ինչն էլ ենթադրում է իրազեկվածության առավել գործունեղանակների կիրառման անհրաժեշտություն:

4. Ատենախոսությունը զերծ չէ որոշ խմբագրական և ձևավորման թերություններից, մասնավորապես՝ ա) սխալ են շարադրված սահմանադրական մարմինների անվանումները, կոնկրետ այդ անվանումներից առաջ չպետք է լիներ «ՀՀ» հապավումը, ինչը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, բ) գրականության ցանկում նշված չեն աղբյուրների բոլոր ռեկվիզիտները, գ) հետազոտության նպատակը ձևակերպված է սուկ գիտագործնական վերլուծություն իրականացնելու կտրվածքով, մինչդեռ՝ հարկ էր անդրադառնալ այն գիտականորեն հիմնավորված եզրահանգումներին, որոնք փաստացի կան աշխատանքում և այլն:

Ատենախոսության հիմնադրույթներին նվիրված հեղինակի մենագրությունը և հոդվածները բացառապես տպագրված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում ու ժողովածուներում, որոնք համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:


Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ նկատառումները, կարծում ենք, որ դրանք նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, ըստ այդմ էլ՝ Թամարա Զավենի Գրիգորյանի «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասութեկտության հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային

իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գևորգ Դանիելյան

Գ.Բ. Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Հարություն Խաչիկյան

«29» դեկտեմբերի 2020 թ.